ԵՐԵԽԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ «ԵՐԵԽԱՅԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՇԱՀԸ» ՈՐՊԵՍ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՏԵԳՈՐԻԱ

https://doi.org/10.59982/18294359-23.14-ei-07

Տիրուհի Ֆրունզիկի Ասլանյան
Հայցորդ
ՀԵՀ, Իրավագիտության ամբիոն
aslanyantiruhi@gmail.com

Ամփոփագիր

Երեխաները համամարդկային արժեք են, հատուկ սոցիալ-ժողովրդագրական խումբ, որն ունի պետության և հասարակության հոգածության կարիքը: Հասարակության ապագան կախված է երիտասարդ սերնդի ֆիզիկական, մտավոր և բարոյական զարգացումից: Ժամանակակից աշխարհում մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների խնդիրը միջազգային հարաբերություններում առաջատար տեղերից մեկն է զբաղեցրել: Երեխայի իրավունքները մարդու համընդհանուր իրավունքների անբաժանելի, բաղկացուցիչ մասն են: Երեխաները ամբողջ աշխարհում հատուկ իրավական պաշտպանության կարիք ունեն, քանի որ իրենք անձամբ չեն կարող պաշտպանել իրենց:

Եվ բնականաբար երեխայի իրավունքների և նրանց պաշտպանության հարցը բոլոր պետություններում, անկախ դրանց ձևից, սոցիալ-տնտեսական և քաղաքական ամենասուր խնդիրներից է, որի լուծմամբ պետք է շահագրգռված լինի ողջ համաշխարհային հանրությունը: Սա մեծապես պայմանավորված է օբյեկտիվ պատճառներով, քանի որ երեխային պետք են հատուկ իրավունքներ և շահերի լրացուցիչ պաշտպանության մեխանիզմներ:

Երեխաների իրավունքների միջազգային պաշտպանության ոլորտում իրավական կարգավորման կարևորագույն կատեգորիաներից մեկը «երեխայի լավագույն շահի» կատեգորիան է: Երեխայի լավագույն շահերի սկզբունքի իրականացումը, որը ենթադրում է դրա կիրառումը ամենուր և առանց բացառության բոլոր երեխաների նկատմամբ, չափազանց անհրաժեշտ է զարգացման ներկա փուլում, երբ միլիոնավոր երեխաներ ամբողջ աշխարհում շարունակում են խտրականության ենթարկվել:

Հոդվածում ուսումնասիրվում է երեխայի իրավունքների միջազգային պաշտպանության ձևավորումը և պատմական զարգացումը, «երեխայի լավագույն շահ»-ի իրավական կատեգորիայի վերլուծությունը և դերը երեխաների իրավունքների պաշտպանության հիմնախնդիրների համատեքստում:

Հիմնաբառեր. երեխայի իրավունք, միջազգային պաշտպանություն, երեխայի լավագույն շահ, ՅՈՒՆԻՍԵՖ, ՄԱԿ, «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիա

Ներածություն

Երեխայի իրավունքների պաշտպանության խնդիրը ներկայումս հանդիսանում է միջազգային իրավունքի գիտության ամենաարդիական և ամենապահանջված թեմաներից մեկը: Երեխայի իրավունքների ապահովումը

ուղղակիորեն ընդգրկված է միջազգային հանրությանը հետաքրքրող գլոբալ խնդիրների շրջանակում: Դա բացատրվում է աճող սերնդի որոշիչ դերով հասարակության կենսունակությունը երաշխավորելու և նրա հետագա զարգացումը կանխատեսելու գործում: Նույնիսկ ամենաժողովրդավարական և տնտեսապես զարգացած պետությունների համար բնորոշ են անչափահասների հանցավորության աճը, ցածր կենսամակարդակով ընտանիքների առկայությունը, անբավարար բուժսպասարկման պատճառով երեխաների մահացությունը և այլն: Այս բոլոր գործոններն ապացուցում են մանկական խնդրի լուծման անհնարինությունը միայն ազգային միջոցներով և համաշխարհային հանրության ջանքերի միավորման անհրաժեշտություն են առաջացնում, ինչն էլ պայմանավորել է երեխայի իրավունքների միջազգային-իրավական պաշտպանության ինստիտուտի առաջացումը:

Ամբողջ աշխարհում երեխաներն ապրում են հատկապես դժվար պայմաններում: Թրաֆիքինգը, մաքսանենգությունը, մարդկանց առևանգումը, տնտեսական և սեռական շահագործումը, ինչպես նաև նրանց առողջության չարաշահումը, շահագործումը և առևտրային շահագործումը ամենօրյա իրականություն են, որը շրջապատում է երեխաներին աշխարհի բոլոր տարածաշրջաններում: Ամբողջ աշխարհում միլիոնավոր երեխաներ զբաղված են աշխատանքով, որոնք խոչընդոտում են նրանց կրթությանը և զարգացմանը, ինչպես նաև զրկում են նրանց ապագա ապրուստի միջոցներից, նրանցից շատերը ներգրավված են երեխաների աշխատանքի վատագույն ձևերում, որոնք անդառնալի ֆիզիկական կամ հոգեբանական վնաս են պատճառում կամ սպառնում են նրանց կյանքին: Երեխաների և նրանց օրգանների և հյուսվածքների առևտուրը, երեխաների սեռական շահագործումը ժամանակակից աշխարհում երեխաների առջև ծառացած խնդիրների ոչ ամբողջական ցանկ է:

Այդ մասին են վկայում ՄԱԿ-ի, ԱՀԿ-ի, ԱՄԿ-ի և երեխայի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող մի շարք միջազգային կազմակերպությունների տվյալները: Ըստ այդ կազմակերպությունների, այսօր երեխաները ինչպես զարգացող, այնպես էլ զարգացած երկրների դպրոցներում, դեռ ենթարկվում են մտավոր կամ ֆիզիկական ահաբեկման, ներգրավվում են ստրկական աշխատանքային հարաբերություններում և դառնում են թրաֆիքինգի զոհ: Դա է պատճառը,որ անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան համընդհանուր և տարածաշրջանային համաձայնագրերում ամրագրված երեխաների իրավունքներն ապահովելու և պաշտպանելու իրականացման միջոցառումները նախատեսվեն պետությունների կողմից ազգային մակարդակով [Защита и поддержка прав детей, 10]: Երեխայի իրավունքների միջազգային պաշտպանությունը ներկայացնում է պետության և ոչ կառավարական միջազգային կազմակերպությունների փոխհամաձայնեցված գործողությունների համակարգը, որն ուղղված է լիարժեք և ներդաշնակորեն զարգացած անձի ձևավորման նպատակով երեխայի իրավունքների մշակմանն ու ապահովմանը, ազգային օրենսդրության մեջ դրանց ամրապնդմանը:

Հետազոտության նպատակն է՝ քննարկել երեխաների իրավունքների միջազգային պաշտպանության պատմական զարգացումը և «երեխայի լավագույն շահը» իրավական եզրույթի կարգավորումը:

Հետազոտության օբյեկտն է՝ երեխայի իրավունքների միջազգային պաշտպանության հիմնախնդիրներն են, **առարկան՝** երեխայի լավագույն շահի, որպես իրավական կատեգորիայի վերլուծությունը:

Հետազոտությունում կիրառվել են պատմաիրավական, դեդուկտիվ և ինդուկտիվ մեթոդները: Պատմաիրավական մեթոդի ընտրությունը թույլ է տալիս բացահայտել երեխաների իրավունքների միջազգային պաշտպանության ոլորտում առկա ներկա հիմնախնդիրները, իսկ մասնավորից ընդհանուր և ընդհանուրից մասնավոր մտահանգումները թույլ են տալիս նախ դիտարկել «երեխայի իրավունք» եզրույթը, ապա անդրադառնալ դրա միջազգային պաշտպանության մեխանիզմներին:

Երեխաների իրավունքների միջազգային իրավական պաշտպանությունը միջազգային մարմինների և ընթացակարգերի համակարգ է, որոնք իրականացնում են երեխաների պաշտպանությունը Երեխայի իրավունքների ոլորտում միջազգային ստանդարտների մշակման և պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից այդ իրավունքների պահպանման նկատմամբ վերահսկողության հատուկ մեխանիզմների ստեղծման միջոցով:

Նախ անդրադառնանք «երեխաների իրավունքներ» հասկացությանը, հայեցակարգը դիտարկվում է համամարդկային արժեքների համատեքստում: Երեխայի անհատականությունը ամենամեծ արժեքն է: Նա ունի նույն իրավունքները, ինչ չափահասը, բայց, ցավոք, չի կարող պաշտպանել իր իրավունքները: Երեխան մոլորակի ամենախոցելի էակն է: Երեխայի իրավունքներն իրավունքների մի շարք են, որոնք գրանցված են երեխայի իրավունքների վերաբերյալ միջազգային փաստաթղթերում:

Օ.Վ. Բուտկոն նշում է, որ երեխայի իրավական կարգավիճակը գնահատվում է որպես անհատի և պետության միջև հարաբերությունների հիմնական սկզբունքների նորմատիվ-իրավական արտահայտման առանցք և երեխայի յուրաքանչյուր իրավունք պետք է լինի երեխայի ծնողների, մանկավարժների, պետական իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների փոխկապակցված լիազորությունների հիմքում: Այս դիրքորոշումը հաստատում է երեխայի իրավունքների բարդ բնույթը [Бутько, 202]:

Ինչ վերաբերում է երեխաների իրավունքների պաշտպանությանը Վ. Ի. Աբրամովը երեխայի իրավունքների պաշտպանության ներքո հասկանում է միջոցների համակարգ, որը կիրառվում է երեխայի սուբյեկտիվ իրավունքների իրականացումն ապահովելու համար: Իսկ երեխայի իրավունքների պաշտպանության մեխանիզմը, նրա կարծիքով, իր իրավունքների իրականացումն ապահովելու համար կիրառվող փոխհամագործակցող սոցիալական և իրավական միջոցների համակարգ է [Абрамов, 450]:

Երեխաների իրավունքները ամրագրված են բազմաթիվ միջազգային փաստաթղթերում՝ *Երեխայի իրավունքների հռչակագիր, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա* և այլն: Միջազգային փաստաթղթերում ամրագրված իրավունքները երեխաներին են պատկանում առանց որևէ սահմանափակումների: Կարևոր չէ, թե ով է ազգությամբ երեխան, մաշկի ինչ գույն ունի, ինչ կրոն է դավանում և այլն: Մինչև վերջերս երեխաների իրավունքների պաշտպանության խնդիրը միջազգային իրավական մակարդակով չի դիտարկվել, համապատասխան հարցերը լուծվել են ընտանիքի, տեղական և ազգային մակարդակներում: Երեխայի իրավունքների պաշտպանությունը մեծապես պայմանավորված է նրանով, թե որքանով է հասարակությունը տեղեկացված երեխաների իրավունքների և դրանց իրականացման ու պաշտպանության մեխանիզմների մասին:

Երեխաների իրավունքները՝ որպես ներհատուկ արժեքավոր երևույթ, առաջին ան-

գամ ճանաչվել են Ֆրանսիայում 1792 թվականին՝ «Երեխայի իրավունքների հռչակում» խորհրդանշական վերնագրով փաստաթղթում: 17 տարի անց Շվեդիան առաջարկեց անկախ մարմինների ստեղծման հայեցակարգը, որով կվերահսկեն կառավարության գործունեությունը անհատական իրավունքների պաշտպանության ոլորտում [Буданова, 12]:

«Հին ժամանակներում Շվեդիայում, ինչպես աշխարհի շատ երկրներում, իշխանությունները երեխաների դաստիարակության ողջ պատասխանատվությունը դնում էին ծնողների վրա: Մոտ 150 տարի առաջ Շվեդիայի օրենքը իրավունք տվեց ամուսնուն ֆիզիկապես պատժել կնոջը, աշխատակիցներին և երեխաներին» [The first anti-spanking law in the world. Historical background to the Swedish legislation. Radda Barnen. Swedish save the children 2]: Երեխաները ենթակա էին բոլոր տեսակի պատիժների, այդ թվում՝ մահապատժի և ծանր աշխատանքի: 17-րդ դարում անգլիական բանտերը լեփ-լեցուն էին 10-12 տարեկան դեռահասներով, իսկ հայտնի «Կարոլինա»-ում՝ Չարլզ V թագավորի քրեական օրենսգրքում (1532 թ.) մահապատիժ էր նախատեսված զգալի մեծ չափերով գողություններ կատարած դեռահասների համար և ծանրացուցիչ հանգամանքներում: Այստեղ գործում էր «չարամիտ դիտավորությունը լրացնում է տարիքի պակասը» սկզբունքը: Եվ չնայած Կարոլինան ասում էր, որ մինչև 14 տարեկան դեռահասները չպետք է ենթարկվեն մահապատժի, տխրահռչակ «չար մտադրությունը» հեշտությամբ օգնեց շրջանցել այս արգելքը: Մինչև 19-րդ դարի կեսերը ոչինչ չարվեց, հաշվի առնելով անչափահասների տարիքը, նրանց կենսափորձի բացակայությունը: Օրինակ, ԱՄՆ-ում գործում էին օրենքներ, որոնք հավասարազոր քրեական պատասխանատվություն էին սահմանում անչափահասների և չափահասների համար [Мельникова, 176]:

Հաշվի առնելով մարդու իրավունքների առաջնահերթությունը միջազգային հարաբերությունների գրեթե բոլոր խնդիրների լուծման գործում և երեխայի իրավունքները որպես համամարդկային արժեքների անբաժանելի մաս, ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան 1946 թվականին ստեղծեց **ՅՈՒՆԻՍԵՖ-ը կամ ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը** (սկզբում այն անվանվել է ՄԱԿ-ի արտակարգ միջազգային մանկական հիմնադրամ, դա պայմանավորված է նրանով, որ դրա նախնական նպատակը հետպատերազմյան երեխաների օգնությունն էր), որը հանդիսանում է երեխաների իրավունքների պաշտպանության հիմնական երաշխավորը և մեխանիզմն ամբողջ աշխարհում: ՄԱԿ-ի մանկական հիմնադրամը (ՅՈՒՆԻՍԵՖ) ստեղծվել էր Երկրորդ համաշխարհային պատերազմից տուժած երեխաներին օգնելու համար: Ենթադրվում էր, որ այս կազմակերպությունը ժամանակավոր է լինելու, սակայն 1953 թվականին ՄԱԿ-ն ընդլայնել է հիմնադրամի շրջանակը և անորոշ ժամկետով երկարաձգել նրա գործունեության ժամկետը:

ՅՈՒՆԻՍԵՖ-ի հիմնական գործառույթն է օգնել զարգացող երկրների կառավարություններին դպրոցների համար սարքավորումների, սննդի, դեղամիջոցների և ուսուցիչների համար կրթաթոշակների տեսքով:

Երեխայի իրավունքների պաշտպանության կանոնաստեղծ աշխատանքներն իրականացվել են երկու ուղղությամբ՝

✓ երեխայի իրավունքների համախմբում մարդու իրավունքների մասին ընդհանուր հռչակագրերում և կոնվենցիաներում կամ միջազգային համաձայնագրերում, որոնք կարգավորում են երեխայի հետ սերտորեն կապված սոցիալական խմբերի իրավունքները (կանանց իրավունքներ) կամ հարաբերությունների որոշակի ոլորտում (ընտանիքի, աշ-

խատանքային իրավունքի, կրթության ոլորտ),

✓ երեխայի իրավունքները հատուկ կարգավորող հռչակագրերի և կոնվենցիաների մշակում:

Առաջին նման փաստաթուղթը Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրն էր, որն ընդունվել է 1948 թվականի դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 217A (III) բանաձևով [Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր»]: Երեխայի իրավունքների հռչակագիրը, որն ընդունվել է 1959 թվականի նոյեմբերի 20-ին 1386 (XIV) բանաձևով ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 841-րդ լիագումար նստաշրջանում, դարձավ հատուկ միջազգային իրավական ակտ, որը սահմանում է երեխայի իրավունքները ամբողջ աշխարհում [«Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա»]

Երեխայի իրավունքների հռչակագրի կարևորագույն պատմական նշանակությունն այն է, որ այս միջազգային փաստաթուղթը մերկացրեց երեխաների իրական վիճակը ժամանակակից աշխարհում և առաջին անգամ սուր կերպով միջազգային հանրության առջև դրեց երեխաների պաշտպանության, նրանց գոյատևման և արժանապատիվ զարգացման խնդիրը: Հռչակագիրը պետությունների, միջազգային հանրության ուշադրությունը գրավեց երեխաների նկատմամբ, ընդգծեց նրանց կողմից երեխաների պաշտպանության միջազգային իրավական փաստաթղթի ստեղծման անհրաժեշտությունը:

Կ. Շնեկենդորֆը, վերլուծելով հռչակագրի դերն ու նշանակությունը, նշում է. «Աշխարհում տեղի ունեցած փոփոխությունները և երեխաների աղետալի վիճակը համաշխարհային հանրությունից պահանջել են նոր փաստաթղթի ընդունում, որում ոչ միայն հայտարարագրվելու էին երեխաների իրավունքները, այլև արձանագրվելու էին այդ իրավունքների պաշտպանության իրավական նորմերը» [Шнекендорф, 14]:

Ս. Ա. Կոզլովան խոսում է «Երեխայի իրավունքների կոնվենցիայի» մասին, ոչ միայն իրավական, այլ նաև մանկավարժական բնութագրի տեսանկյունից, որը ենթադրում է աճող սերնդի դաստիարակության գործընթացը կառուցել բարոյական հիմքի վրա՝ երեխային համարելով բոլոր իրավունքներով օժտված և դրա համար էլ չափահաս բնակչության կողմից իր նկատմամբ անհրաժեշտ վերաբերմունք պահանջող մարդ [Козлова,44]:

Կարծում ենք, որ հռչակագրի բազմակողմանիությունը կայանում է նրանում, որ այն ստեղծելով երեխաների պաշտպանության և նրանց իրավունքների ապահովման մեխանիզմ, հաշվի է առնում տարբեր երկրների զարգացման ազգային, մշակութային, տնտեսական, քաղաքական և սոցիալական պայմանները: Դա թույլ է տալիս պետություններին խստորեն հետևել կոնվենցիայի պահանջներին և միաժամանակ չխախտել իրենց կյանքի ազգային կարգը, օգտագործել միայն այդ պետությանը բնորոշ իրենց միջոցները, որոնք ապահովում են երեխայի հուսալի պաշտպանությունը:

Հարկ է նշել, որ ի լրումն մարդու իրավունքները, այդ թվում՝ երեխայի իրավունքները պաշտպանող առկա փաստաթղթերի, ընդունվել են նաև այլ կարևոր համաձայնագրեր: Այսպես, 1966 թվականին ընդունվեցին «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը», «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը», որտեղ ևս մեկ անգամ ամրագրվեցին հասարակության և պետության կողմից երեխայի պաշտպանության իրավունքի մասին դրույթները:

Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի

24-րդ հոդվածը սահմանում է, որ «Յուրաքանչյուր երեխա, առանց ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, ազգային կամ սոցիալական ծագման, գույքային վիճակի կամ ծննդի հատկանիշով որևէ խտրականության, իրավունք ունի իր ընտանիքի, հասարակության և պետության կողմից պաշտպանության այնպիսի միջոցների, որոնք անհրաժեշտ են նրան որպես մանկահասակի» [Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր]:

Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրի 10-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է՝ «Պաշտպանության և օգնության հատուկ միջոցներ պետք է ձեռնարկվեն բոլոր երեխաների և դեռահասների նկատմամբ՝ առանց որևէ խտրականության ընտանեկան ծագման հատկանիշով կամ այլ հատկանիշով: Երեխաները և դեռահասները պետք է պաշտպանված լինեն տնտեսական և սոցիալական շահագործումից» [«Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր]:

Ժամանակի ընթացքում ակնհայտ դարձավ այն փաստը, որ երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում առկա նորմերը հրատապ կարիք ունեն երեխայի կարիքները բավարարելու համար:

Հաշվի առնելով երեխաների իրավունքների վերաբերյալ միջազգային ստանդարտների հետագա զարգացումը՝ Լեհաստանի նախաձեռնությամբ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը ձեռնամուխ է եղել Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի մշակմանը:

Ենթադրվում էր, որ 1979 թվականին, որը ՄԱԿ-ը հայտարարել է երեխայի տարի, Կոնվենցիան կընդունվի: Սակայն դրա դրույթների վրա աշխատանքը շարունակվել է ավելի քան 10 տարի, և միայն 1988 թվականին ՄԱԿ-ում ներկայացվել է կոնվենցիայի նախագծի վերջնական տարբերակը:

Ըստ ՄԱԿ-ի, «աղքատության և հիմնական սոցիալական ծառայությունների անհասանելիության պատճառով ամեն տարի մինչև հինգ տարեկան ավելի քան 10 միլիոն երեխա մահանում է կանխարգելելի հիվանդություններից և թերսնումից, որոնց գրեթե կեսը կյանքի առաջին ամիսներին. 100 միլիոն երեխա դեռ չի սովորում, որոնց 60% աղջիկներ են» [The Declaration and Plan of Action «A world fit for children»]:

Ինչպես իրավացիորեն նշել է Վ. Ս. Օվչինսկին, «առանձին պետությունների կողմից ձեռնարկվող միջոցները չեն կարող բավարար լինել: Անհրաժեշտ է բոլոր շահագրգիռ կողմերի համատեղ մոտեցումը երեխաների իրավունքների պահպանման համար..» [Овчинский, 733]:

Վերոնշյալներ հիմնախնդիրների վերհանման կարևորությունն էլ նպաստեց երեխաների իրավունքների միջազգային պաշտպանության ինստիտուտի ստեղծմանը, որի գոյությունը հնարավոր չէր լինի առանց երեխաների պաշտպանության ոլորտում միջազգային իրավական չափանիշների և սկզբունքների մշակմանն ուղղված ողջ միջազգային հանրության ջանքերի: Ըստ պրոֆեսոր Յ. Ս. Բադալյանցի «Երեխայի իրավունքների միջազգային պաշտպանության ինստիտուտն իրենից ներկայացնում է *երեխաների իրավունքներն ու ազատությունները որոշող միջազգային իրավական սկզբունքների և նորմերի ամբողջություն*, որոնք սահմանում են պետության պարտավորությունները՝ ապահովելու և գործնականում կյանքի կոչելու ուղղությամբ, ինչպես նաև պետությունների կողմից իրենց պարտավորությունների կատարման նկատմամբ վերահսկողության միջազգային մեխանիզմների ամբողջություն» [Badalyants, 120]:

Անչափահասների իրավունքների միջազգային պաշտպանության ձևավորման գործում կարևոր դերը պատկանում է Երեխաների փրկության միջազգային միության հիմնադիր Է.Ջեբին: Այս կազմակերպության աշխատակիցները պատրաստել են միջազգային իրավական փաստաթղթի նախագիծ, որը պարունակում է այն հիմնական պայմանները, որոնց պետք է հետևի հասարակությունը՝ երեխաներին համապատասխան պաշտպանություն և խնամք ապահովելու համար: Խոսքը Ազգերի լիգայի հինգերորդ վեհաժողովի կողմից ընդունված 1924 թվականի Երեխայի իրավունքների հռչակագրի (այսուհետ՝ Հռչակագիր) մասին է, որը սկիզբ դրեց երեխաների իրավունքների ամրապնդմանը միջազգային իրավունքում: Հարկ է նշել, որ իրավական տեխնիկայի կանոնների տեսանկյունից հռչակագիրը իդեալական միջազգային իրավական փաստաթուղթ չէր, քանի որ այն չէր ամրագրում «երեխա» հասկացությունը:

Չնայած այն հանգամանքին, որ Հռչակագիրը բավականին վերացական բնույթ ուներ, այն ուրվագծեց երեխայի իրավական կարգավիճակի փոփոխության միտումը և առաջադիմական նշանակություն ունեցավ երեխաների միջազգային իրավական պաշտպանության ինստիտուտի հետագա զարգացման համար:

Հռչակագրի նշանակությունը կայանում է նաև նրանում, որ այն առաջին անգամ մատնանշեց երեխաների հատուկ պաշտպանության և խնամքի անհրաժեշտությունը, համախմբեց երեխաների իրավունքների **միջազգային պաշտպանության ինստիտուտի այնպիսի սկզբունքներ,** ինչպիսիք են.

- երեխայի բնականոն զարգացման համար անհրաժեշտ միջոցներ տրամադրելու իրավունք՝ ինչպես ֆիզիկական, այնպես էլ հոգևոր.
- դժվարին իրավիճակներում սննդի, օգնության, ապաստանի և աջակցության իրավունք.
- սիրո մթնոլորտում ապրելու և շահագործումից բոլոր ձևերից պաշտպանվելու իրավունք.
- դաստիարակվելու իրավունք՝ իմանալով, որ երեխայի լավագույն որակները պետք է ծառայեն ի շահ այլ մարդկանց [Доклад Совета по правам человека «Поощрение и зашита детей»]:

Հռչակագիրը մանկության հարցերի միջազգային իրավական կարգավորման ուղենիշ է դարձել: Ակնհայտ է, որ նրա բոլոր հիմնարար գաղափարներն ու սկզբունքները երեխայի իրավունքներն ամրապնդող ժամանակակից միջազգային իրավական ակտերի հիմքերն են: Իսկ արդեն երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ստեղծվեց Միավորված ազգերի կազմակերպությունը, որի հովանու ներքո մշակվեց և ընդունվեցին մի շարք կարևոր միջազգային իրավական փաստաթղթեր, այդ թվում՝ երեխայի իրավունքների պաշտպանության ոլորտում:

Մանկության խնդիրները դիտարկվում են որպես տարբեր տեսակի դժվարությունների համակցություն, որոնք խանգարում են երեխայի անձի բարենպաստ ներդաշնակ զարգացմանը: Մանկության խնդիրները ներառում են նաև սոցիալական պատճառներով երեխաների հիվանդացության աճ, երեխա ունեցող ընտանիքների աղքատություն, սոցիալական որբության աճ, հանցագործության աճ, զինված հակամարտություններ, գործազրկություն, բարոյական դեգրադացիա, թմրամոլություն, ալկոհոլիզմ երեխաների շրջանում, երեխաների նկատմամբ բռնություն, երեխաների շահագործման տարբեր ձևեր, երեխաների անօթևանություն և անտեսում: Երեխաների վիճակը վատթարացնող ցանկացած անբա-

րենպաստ միտումները վտանգ են ներկայացնում երկրի ապագայի համար:

Դ.Ի. Ֆելդշտեյնը մեծ ուշադրություն դարձնելով «մանկություն» եզրույթին, նշում է՝ *«Մանկությունը հատուկ, ամբողջականորեն ներկայացված սոցիալական երևույթ է, որն ունի որոշակի ժամանակավոր տևողություն: Որպես հատուկ սոցիալական երևույթ՝ մանկությունը պատմական է՝ հասարակության զարգացման տարբեր պատմական փուլերում այն ունի այլ կարողություն, այլ կառուցվածք»* [Фельдштейн, 2]:

«Երեխայի լավագույն շահը» որպես իրավական կատեգորիա Երեխայի լավագույն շահը ծնողների կամ, անհրաժեշտության դեպքում, օրինական խնամակալների առաջնային մտահոգությունն է: Ընտանիքն առաջնային պատասխանատվություն է կրում երեխաներին դաստիարակելու և հասարակության կյանքին նախապատրաստելու, ինչպես նաև նրանց մեջ սոցիալական պատասխանատվության և հասարակությանը պատկանելու զգացում սերմանելու համար: Ընտանիքը նյութական և ոչ նյութական խնամք և աջակցություն է ցուցաբերում իր երեխաներին: Երկար ժամանակ երեխան հանդես է եկել որպես ծնողական իշխանության օբյեկտ: Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիան նրան ոչ միայն բնորոշեց որպես հատուկ իրավունքներ ունեցող անձ: Փաստաթուղթը այլ կերպ է շեշտը դնում երեխաների և մեծահասակների վրա, «պահանջում է, որ երեխաները դիտարկվեն... որպես իրենց հետաքրքրություններով և մտահոգություններով սուբյեկտներ» [Кабанов, 150]:

Այս նորամուծությունը, ընդգծում է Ն.Է. Բորիսովը, բացահայտվում է հետևյալ դրույթներում.

- երեխաները, անկախ ռասայից, գույնից, սեռից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ կարծիքներից, ազգային կամ սոցիալական ծագումից, տնտեսական և ֆիզիկական վիճակից, երեխայի, նրա ծնողների կամ խնամակալների ցանկացած այլ կարգավիճակից, չպետք է խտրականության ենթարկվեն.
- երեխաներն ունեն գոյատևման և զարգացման իրավունք իրենց կյանքի բոլոր ասպեկտներում՝ ֆիզիկական, հոգևոր, սոցիալական և մշակութային.
- երեխաները պետք է ներգրավված լինեն հասարակական կյանքում, ընկալվեն որպես ակտիվ մասնակից այն ամենի, ինչը շոշափում է նրանց շահերը, և լիովին ազատ լինեն արտահայտելու իրենց կարծիքը:
- երեխայի լավագույն շահերը պետք է հաշվի առնվեն ցանկացած որոշման կամ գործողության մեջ, որն անմիջականորեն կապված է երեխայի կամ երեխաների խմբի հետ [Борисова,73]:

Հետևաբար, անհրաժեշտ է պարզել, թե ինչ է ներդրվում «երեխայի շահ» հասկացության մեջ, *քանի որ բացակայում է անչափահասների շահերի հստակ սահմանումը, չկա երեխաների շահերին ծնողների շահերի համապատասխանության հաստատման չափանիշ*: Երեխայի շահերի էության, առանձնահատկությունների բացահայտումը կարևոր է նախևառաջ այն պատճառով, որ «շահը» որպես իրավական կատեգորիա հանդիսանում է իրավական կարգավորման միջուկը, որոշում է դրա ուղղությունը, որն ունի միանգամայն որոշակի նպատակներ, որոնց հասնելու համար գոյություն ունի այս կամ այն իրավական նորմը [Ильина, 13]: Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայի 3-րդ հոդվածի համաձայն «Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական

կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում ***երեխայի լավագույն շահերին***»: Այս սկզբունքը կապված է այն բանի հետ, որ երեխաները լիարժեք մարդիկ են, որոնց շահերը կարևոր են: Այն ոչ միայն նախատեսում է, որ երեխաների կարիքներն էական են, այլ ենթադրում է, որ երեխայի մասին որոշումներ կայացնելիս այդ կարիքները պետք է հաշվի առնել առաջին հերթին:

Հետևելով երեխայի իրավունքների հռչակագրին երեխային օրենքով և այլ միջոցներով պետք է ապահովվի հատուկ պաշտպանություն և ներկայացվեն հնարավորություններ և բարենպաստ պայմաններ, որոնք թույլ կտան նրան զարգանալ ֆիզիկապես, մտավոր, բարոյապես, հոգեպես և սոցիալական առումով առողջ և նորմալ ճանապարհով՝ ազատության և արժանապատվության պայմաններում: Այդ նպատակով օրենքներ ընդունելիս գլխավոր նկատառումը պետք է լինի երեխայի շահերի լավագույն ապահովումը [Пишкова, 161]: Ի.Ա. Դուբրովսկայան երեխայի շահերը սահմանում է որպես երեխայի սուբյեկտիվորեն որոշված կարիք նրա գոյության բարենպաստ պայմաններում, որն օբյեկտիվորեն արտահայտվում է ծնողների կողմից ընտանեկան օրենսդրությամբ նախատեսված իրենց իրավունքների և պարտականությունների իրացման մեջ [Дубровская, 176]:

Եզրակացություն

Այսպիսով ուսումնասիրության արդյունքում կարող ենք եզրահանգել, որ Երեխաների շահերի բովանդակությունը անընդհատ փոխվում է: Դա օբյեկտիվորեն կախված է երեխայի տարիքից, զարգացման վիճակից: Կյանքի բազմազանության պատճառով անչափահասի շահերը կարող են տարածվել տարբեր ուղղություններով: Մինչդեռ երեխան, ելնելով իրեն բնորոշ օբյեկտիվ և սուբյեկտիվ բնութագրերից, միշտ չէ, որ տեղյակ է իր շահերից, հետևաբար երեխայի շահերի բովանդակությունը որոշվում է նրա օրինական ներկայացուցիչների գործողությունների, խնամակալության և խնամակալության հատկանիշներով:

Այսպիսով, «երեխայի լավագույն շահերը» երեխայի կենսական կարիքներն են, առանց որոնց իրականացման նա չի կարող ապրել և զարգանալ [Носова, 18]: Շահը նախորդում է իրավունքներին և պարտականություններին՝ անկախ նրանից, թե այն ուղղակիորեն ամրագրված է օրենսդրությամբ, թե պարզապես ենթակա է պետության կողմից իրավական պաշտպանության: Այսպիսով, կարելի է փաստել, որ, հանդես գալով որպես իրավունքի սուբյեկտ, երեխան հնարավորություն ունի բավարարելու սեփական շահը և հասնել որոշակի սոցիալական բարիքի: «Երեխաների մասին» ՀՀ օրենքը, խոսելով երեխաների սուբյեկտիվ իրավունքների մասին, օգտագործում է «օրինական շահ» տերմինը, ինչը թույլ է տալիս ոչ միայն համակողմանիորեն երաշխավորել. երեխայի պատշաճ կարգավիճակը պետության մեջ, այլև ամեն կերպ նպաստել ամրագրված իրավունքների իրական իրականացմանը՝ ելնելով բնակիչների պաշտպանված կատեգորիայի շահերից:

ՀՀ-ում երեխաների վիճակի բարելավումը, նրանց կյանքի համար բարենպաստ պայմանների ստեղծումը, երեխաների ուսուցումն ու կրթությունը ազգային զարգացման հիմնական նպատակներն են:

Գրականության ցանկ

1. Абрамов, В.И. Права ребенка и их защита в России: общетеоретический анализ доктор юридических наук. - Саратов, 2007 455 с.
2. Бутько, О.В. Правовой статус ребенка: теоретико-правовой анализ: дис канд. юрид. наук. - Краснодар, 2004, 214 с.
3. Буданова Г.П. Права детей как концептуальная основа содержания деятельности уполномоченного по правам ребенка.// Права ребенка. Институт Уполномоченного по правам ребенка в Российской Федерации: опыт, проблемы, теоретические модели, нормативно-правовая база. М., 2001, 152 с.
4. Борисова, Н. Е. Конституционные основы правового положения несовершеннолетних в Российской Федерации: Проблемы теории и практики: дис. ... д-ра юрид. наук / Борисова Наталья Евгеньевна. - М., 2004, 173 с.
5. Ильина, О. Ю. Интересы ребенка в семейном праве Российской Федерации / О. Ю. Ильина. - М.: Городец, 2006, 40 с.
6. Дубровская, И. А. Права ребенка / И. А. Дубровская. - М.: Гросс Медиа, 2008. 178 с.
7. Козлова, С. А. Нравственное и трудовое воспитание дошкольников: учебное пособие для студентов высших педагогических учебных заведений / С. А. Козлова, Н. К. Дедовских, В. Д. Калишенко. Москва: Академия, 2002, 416 с.
8. Овчинский В. С Криминальное насилие против женщин и детей: международные стандарты противодействия: сборник документов /. М., 2008 816 с.
9. Кабанов, В. Л. Защита семьи на повестке дня международного сообщества / В. Л. Кабанов // Вестник Волгоградского государственного университета. Серия 5, Юриспруденция. 2015. - №2 1 (26). 250 с.
10. Носова, И. Ю., О понятии и классификации прав ребенка / И. Ю. Носова // Конституционное и муниципальное право. - 2010. - №2, 252 с.
11. Пишкова О. В, А. Ф. Радевич Защита прав ребенка /. - Ижевск: Центр социальных и образовательных инициатив, 2006, 192 с.
12. Фельдштейн, Д. И. Глубинные изменения детства и актуализация психолого-педагогических проблем развития образования / Д.И. Фельдштейн. - СПб.: СПбГУП, 2011, 36 с.
13. Шнекендорф З. К., Младшим школьникам о правах ребенка. Пособие для учителя. М.: Вита-пресс. 1997. 31 с.
14. Badalyants Yu. S. Rights of women and children: history and modernity: monograph. Ryazan, 2008, p 140.
15. Мельникова Э.Б. Толковый юридический словарь школьника. М.: Вита-пресс. 2000, с 184
16. The Declaration and Plan of Action «A world fit for children» (adopted by the resolution S-27/2 of the special session of the UN General Assembly on May 10, 2002) 09.01.2023,URL: http://www.un.org/ ru/documents/ decl_conv / declarations / worldchild.shtml
17. The first anti-spanking law in the world. Historical background to the Swedish legislation. Radda Barnen. Swedish save the children 11.01.2023, https://resourcecentre.savethechildren.net/document/first-anti-spanking-law-world-historical-background-swedish-legislation/
18. Доклад Совета по правам человека «Поощрение и зашита детей», представленный на конференции «Московская международная модель ООН-2012». 11.01.2023 URL: http://sartraccc.ru/ i.php?oper=read_file&filename=pub_inter.htm.
19. Защита и поддержка прав детей Глобальное исследование независимых учреждений по защите прав детей, 11.01.2023 https://www.unicef irc.org/publications/pdf/championing2_ru.pdf
20. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր» ընդունված՝ 10.12.1948

21. «Երեխաների իրավունքների մասին կոնվենցիա» ընդունված՝ 20.11.1959
22. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին» միջազգային դաշնագիր ընդունված՝ 16.12.1966
23. «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին» միջազգային դաշնագիր ընդունված՝ 16.12.1966

THE INTERNATIONAL PROTECTION OF THE CHILD'S RIGHT AND THE "BEST INTEREST OF THE CHILD" AS A LEGAL CATEGORY

Aslanyan Tiruhi
Researcher
EUA, Chairt of Law, aslanyantiruhi@gmail.com

Children are a universal human value, a special socio-demographic group that needs the care of the state and society. The future of society depends on the physical, mental and moral development of the younger generation. In the modern world, the problem of human and civil rights and freedoms occupies one of the leading places in international relations. Children's rights are an integral part of universal human rights. Children all over the world need special legal protection because they cannot protect themselves personally.

And naturally, the issue of children's rights and their protection in all States, regardless of their form, is one of the most acute socio-economic and political issues, the solution of which should be of interest to the entire world community. This is largely due to objective reasons, since the child needs special rights and additional protection mechanisms.

One of the most important categories of legal regulation in the field of international protection of children's rights is the category "the best interests of the child". The implementation of the principle of the best interests of the child, assuming its application to all children everywhere and without exception, is extremely necessary at the present stage of development, when millions of children around the world continue to be discriminated against.

The article examines the formation and historical development of the international protection of children's rights, the analysis of the legal category "the best interests of the child" and its role in the context of the protection of children's rights.

Keywords: Rights of the child, international protection, best interests of the child, UNICEF, UN, Convention on the Rights of the Child

Ներկայացվել է՝ 20.02.2023թ.
Ուղարկվել է գրախոսման՝ 14.05.2023թ.